

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ
ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ և ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Հիմնաբառեր – պարտավորություն, ռիսկ, կառավարում, ներդրող, փոխառու կապիտալ, կազմակերպություն, ֆինանսական կայունություն, գործոն, վերլուծություն

Տնտեսական վերափոխումներին համահունչ նորովի լուծումներ են պահանջվում արտադրական կազմակերպությունների ֆինանսական կայունացմանն ուղղված ռազմավարության մշակման աշխատանքներում:

Կազմակերպության ֆինանսական կայունությունը ռեսուրսների բաշխման և օգտագործման գործընթացում տնտեսական և ֆինանսական այն վիճակն է, որն ապահովում է նրա անընդհատ զարգացումը շահույթի ու կապիտալի աճի նպատակով՝ պահպանելով ցանկալի վճարունակություն¹:

Կազմակերպության ֆինանսական կայունությունը որոշվում է ծախսերի համեմատ եկամուտների գերազանցմամբ, այն ապահովում է դրամական միջոցների ազատ շարժ և արտադրության պրոցեսի ու արտադրանքի իրացման անխափան գործընթաց²:

Ֆինանսական կայունությունը հենվում է կազմակերպության ակտիվների առանձին տեսակների (ընթացիկ և ոչ ընթացիկ) և դրանց ֆինանսավորման աղբյուրների (սեփական կամ ներգրավված միջոցների) օպտիմալ հարաբերակցության վրա:

Կազմակերպության ֆինանսական կայունության գործակիցների համակարգին ծանոթանալու համար ամփոփ աղյուսակի տեսքով ներկայացնենք տնտեսագիտական գրականության մեջ առավել լայն կիրառում ունեցող գործակիցները, դրանց հաշվարկման մոտեցումները և առաջարկվող սահմանային արժեքները:

¹ Гиляровская Л. Т., Вехорева А. А. «Анализ и оценка финансовой устойчивости коммерческого предприятия». - СПб.: Питер, 2003, стр. 13

² Селезнева Н. Н., Ионова А. Ф. «Финансовый анализ»: Учеб. пособие. - М.: ЮНИТИ - ДАНА, 2002, стр. 344

Ֆինանսական կայունության գործակիցների համակարգը

	Գործակցի անվանումը	Հաշվարկման հիմքը	Նորմատիվի առաջարկվող արժեքը
1	2	3	4
Գ ₁	Ֆինանսական անկախության (ինքնուրույնության) կամ սեփական կապիտալի կենտրոնացման գործակից	Սեփական կապիտալ/ Ակտիվների հանրագումար	0.5-ից մեծ ³
Գ ₂	Ֆինանսական կախվածության կամ փոխառու կապիտալի կենտրոնացման գործակից	Ոչ ընթացիկ+ ընթացիկ պարտավորություններ/Ակտիվների հանրագումար	0.5-ից փոքր ⁴
Գ ₃	Սեփականության կամ կապիտալի համարժեքության գործակից	Սեփական կապիտալ/Սեփական կապիտալ+պարտավորություններ	0.6-ից մեծ ⁵
Գ ₄	Երկարաժամկետ ֆինանսական անկախության կամ ֆինանսական կայունության գործակից	Սեփական կապիտալ+ոչ ընթացիկ պարտավորություններ/Ակտիվների հանրագումար	0.6-ից մեծ ⁶
Գ ₅	Ֆինանսական ռիսկի գործակից	Ոչ ընթացիկ+ ընթացիկ պարտավորություններ/Սեփական կապիտալ	1-ից փոքր ⁷

³ Вакуленко Т.Г., Фомина Л.Ф. «Анализ бухгалтерской (финансовой) отчетности для принятия управленческих решений». - СПб.: «Издательский дом Герда», 2003, стр. 67

⁴ Вакуленко Т.Г., Фомина Л.Ф. «Анализ бухгалтерской (финансовой) отчетности для принятия управленческих решений». - СПб.: «Издательский дом Герда», 2003, стр. 67.

⁵ «Մենեջմենթ» /ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Յու. Ս. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ (երրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակություն),- Եր.: Տնտեսագետ, 2009, էջ 136-138

⁶ Донцова Л. В., Никифорова Н.А. «Анализ финансовой отчетности».-Учебное пособие.-М.: Издательство «Дело и Сервис», 2003, стр. 126

⁷ Սարգսյան Ա.Ջ., Առաքելյան Կ.Ա. Տնտեսական գործունեության վերլուծություն: Երևան, Տնտեսագետ, 2005թ., էջ 369:

Ֆինանսական կայունության գործակիցները հանդիսանում են կազմակերպության գործունեության հատուկ բնութագրիչներն ու հարկ է մշտապես գնահատել և հետևել դրանց դինամիկային:

«Նորդ-Իմպորտ» ՍՊԸ-ի տվյալներով որոշել ենք վերը բերված ֆինանսական կայունության գործակիցները, որոնց արդյունքները ներկայացված են թիվ 2 աղյուսակում:

Աղյուսակ 2

Ֆինանսական կայունության գործակիցների վերլուծությունը
«Նորդ- Իմպորտ» ՍՊԸ-ում

Գործակիցները	2011թ.	2012թ.	2013թ.	Շեղումը	
				2012թ.-ի 2011թ.-ի համեմատ	2013 թ.-ի 2012թ.-ի համեմատ
1	2	3	4	5	6
1. Q_1	0.3	0.15	0.32	-0.15	+0.17
2. Q_2	0.7	0.85	0.684	+0.15	-0.166
3. Q_3	0.3	0.15	0.32	-0.15	+0.17
4. Q_4	0.73	0.32	0.5	-0.41	+0.18
5. Q_5	2.31	5.7	2.17	+3.39	-3.53

Աղյուսակ 2-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ «Նորդ-Իմպորտ» ՍՊԸ-ում 2011-2013 թթ. կազմակերպության ֆինանսական կայունությունը բնութագրող ինտեգրալ գործակիցը՝ ֆինանսական անկախության գործակիցը, սահմանված նորմատիվային արժեքից՝ 0.5-ից, փոքր է, որը խոսում է այն մասին, որ կազմակերպությունը, իրացնելով ակտիվները, այդքան էլ չի կարողանում մարել իր բոլոր պարտավորությունները և պահպանել սեփականության իրավունքը, քանի որ ինչքան փոքր է այս գործակից արժեքը սահմանված նորմատիվից, այնքան բարձր է անվճարունակության ռիսկը, ընդ որում տվյալ գործակից արժեքի նվազումն արտացոլում է նաև ուսումնասիրվող կազմակերպությանը որոշակի չափով սպառնացող դրամական միջոցների պակասորդի վտանգը:

Ավելի հաճախ օգտագործվող գործակիցը, որը կապված է կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատման հետ, համարվում է ֆինանսական կախվածության գործակիցը, որը նորմալ տնտեսավարման պայմաններում պետք է փոքր լինի 0.5-ից: Եթե այն մեծ է սահմանված նորմատիվային արժեքից, ապա նշանակում է, որ ընկերության գործունեությունը այնքան էլ բնականոն

հունով չի ընթանում և կազմակերպության վճարունակությունը այնքան էլ ապահովված չէ՝ կապված ակտիվների նկատմամբ պարտավորությունների զգալի գերազանցմամբ: «Նորդ-Իմպորտ» ՍՊԸ-ում այս գործակիցը 2011-2013 թթ.-ին գերազանցում է սահմանված նորմատիվը, ինչը նշանակում է, որ կազմակերպության ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը որոշակի չափով սխալ է, և այս կազմակերպությունում տվյալ գործակցի կտրվածքով ևս մեծ են ռիսկերը:

Ընկերության վճարունակության և ֆինանսական կայունության կարևոր գործակիցներից է սեփականության կամ կապիտալի համարժեքության գործակիցը, որն ընդունված է, որ պետք է կազմի շուրջ 0.6, ինչը վկայում է կազմակերպության ֆինանսական կայունության մասին, որի միջոցների 60 տոկոսը սեփական են, իսկ փոխառու միջոցներն ավելի քիչ են: 2011-2013թթ. «Նորդ-Իմպորտ» ՍՊԸ-ում կապիտալի համարժեքության գործակիցը բավականին զիջում է սահմանված նորմատիվից, ինչն իհարկե բավականին վատ է անդրադառնում կազմակերպության վճարունակության վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ շուկայական տնտեսության պայմաններում սեփական կապիտալի բարձր տեսակարար կշիռը դեռևս չի վկայում կազմակերպության ֆինանսական կայունության մասին, քանի որ պարտավորությունների աճը, ընդհակառակը՝ վկայում է կազմակերպության ֆինանսական ճկունության և կրեդիտորների կողմից նրա նկատմամբ ձևավորված վստահության կայուն աստիճանի մասին, ինչը, մեր կարծիքով, բնորոշ է ուսումնասիրվող կազմակերպությանը:

Կազմակերպության ֆինանսական կայունության գնահատման հաջորդ կարևոր գործակիցը երկարաժամկետ ֆինանսական անկախության կամ ֆինանսական կայունության գործակիցն է, որն, ըստ էության, արտահայտում է կազմակերպության անկախությունը (կամ կախվածությունը) կարճաժամկետ փոխառու աղբյուրներից: Սեփական կապիտալի և ոչ ընթացիկ պարտավորությունների գումարային մեծության հարաբերությունը ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների գումարային մեծությանը ցույց է տալիս, թե ակտիվների որ մասն է ֆինանսավորվում ի հաշիվ կայուն աղբյուրների: Նդունված է, որ այս գործակիցը պետք է մեծ լինի 0.6-ից, սակայն ինչպես տեսնում ենք, «Նորդ-Իմպորտ» ՍՊԸ-ում գլխավորապես 2011թ. է նշված գործակիցը գերազանցել նորմատիվային արժեքին, իսկ 2012-2013թթ. այն փոքր ինչ նվազել է: Տվյալ դեպքում կազմակերպության ակտիվների ոչ այդքան մեծ մասն է ֆինանսա-

վորվում կայուն աղբյուրների հաշվին, այսինքն՝ մեծ է կախվածությունը կարճաժամկետ փոխառու միջոցներից, որի երկարաձգվելու կամ ավելանալու դեպքում կազմակերպությունը կարող է հայտնվել ֆինանսապես անկայուն վիճակում:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ֆինանսական ռիսկի գործակիցը, որի գնահատման համար կարևոր նշանակություն ունի կազմակերպության կապիտալի կառուցվածքը, այսինքն՝ կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը: Եթե տվյալ գործակիցը մեծ է սահմանված նորմատիվից՝ 1-ից, որն առկա է «Նորդ-Իմպորտ» ՍՊԸ-ում 2011-2013 թթ., ապա դա վկայում է այն մասին, որ կազմակերպության գործունեությունը մեծապես կախված է արտաքին ֆինանսավորումից, ինչը կարող է հանգեցնել սեփական միջոցների պակասի, պարտքի աճի և սնանկացման:

Ֆինանսական ռիսկը գործընթաց է, որի մակարդակը կարելի է կառավարել, այսինքն՝ ազդեցություն գործադրել դրա վրա: Դրա համար անհրաժեշտ է այն ճանաչել՝ ուսումնասիրել և վերլուծել ռիսկի արտահայտումները տարբեր իրավիճակներում, բացահայտել դրա վրա ազդող գործոնների կազմը և նշանակությունը, դրանցից յուրաքանչյուրի արտահայտման հետևանքները: Այդ գործոնների ազդեցության չափը որոշելու համար ֆինանսական ռիսկի գործակցի վերը նշված բանաձևի մեջ կարելի է կատարել որոշակի վերափոխումներ⁸:

$$\frac{\mathcal{R}}{U_y} = \frac{\mathcal{R}}{U} : \frac{N_{\text{ըա}}}{U} : \frac{L_w}{N_{\text{ըա}}} : \frac{U_y}{L_w}$$

\mathcal{R} – պարտավորությունների մեծությունն է

U_y – սեփական կապիտալի մեծությունն է,

U - ակտիվների ընդհանուր մեծությունն է,

$N_{\text{ըա}}$ ոչ ընթացիկ ակտիվներ մեծությունն է,,

L_w ընթացիկ ակտիվների մեծությունն է

\mathcal{R}/U - ֆինանսական կախվածության գործակիցն է,

$N_{\text{ըա}}/U$ - ոչ ընթացիկ ակտիվների և ակտիվների հարաբերակցության գործակիցն է,

⁸ Սարգսյան Ա.Ձ., Առաքելյան Կ.Ա. Տնտեսական գործունեության վերլուծություն: Երևան, Տնտեսագետ, 2005թ., էջ 370:

Ը_ա/Ո_{րա} - ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների հարաբերակցության գործակիցն է,

Ս_լ/Ը_ա - սեփական կապիտալի և ընթացիկ ակտիվների հարաբերակցության գործակիցն է:

«Նորդ-Իմպորտ» ՍՊԸ-ի տվյալներով թիվ 3 աղյուսակում կատարվել է ֆինանսական ռիսկի վերլուծություն:

Աղյուսակ 3

Ֆինանսական ռիսկի վրա ազդող գործոնների վերլուծությունը

Ցուցանիշներ	2012թ.	2013թ.	Շեղումը
1	3	4	5
1. Ոչ ընթացիկ ակտիվներ, հազ. դրամ	1173.1	1585.2	+412.1
2. Ընթացիկ ակտիվներ, հազ. դրամ	126548.6	120127.1	-6421.5
3. Սեփական կապիտալ, հազ. դրամ	19057.2	38454.2	+19397.0
4. Պարտավորություններ, հազ. դրամ	108664.5	83258.1	-25406.4
5. Ֆինանսական կախվածության գործակից	0.85	0.684	-0.166
6. Ոչ ընթացիկ ակտիվների և ակտիվների հարաբերակցության գործակից	0.009	0.013	-0.004
7. Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների հարաբերակցության գործակից	107.875	75.78	-32.095
8. Սեփական կապիտալի և ընթացիկ ակտիվների հարաբերակցության գործակից	0.151	0.32	+0.179
9. Ֆինանսական ռիսկի գործակից	5.7	2.17	-3.53

Շղթայական տեղադրումների եղանակաով կատարվախ հաշվարկները հետևյալն են.

1) հաշվարկ՝ $0.85 : 0.009 : 107.875 : 0.151 = 5.7$,

2) հաշվարկ, 1) տեղադրում՝ $0.684 : 0.009 : 107.875 : 0.151 = 4.67$,

3) հաշվարկ, 2) տեղադրում՝ $0.684 : 0.013 : 107.875 : 0.151 = 3.23$,

4) հաշվարկ, 3) տեղադրում՝ $0.684 : 0.013 : 75.78 : 0.151 = 4.59$,

5) հաշվարկ, 4) տեղադրում՝ $0.684 : 0.013 : 75.78 : 0.32 = 2.17$:

Վերը նշված գործոնների ազդեցությունը վերլուծվող կազմակերպության համար կազմել է՝

1. Պարտավորությունների և ակտիվների հարաբերակցության գործակիցը՝ -1.03,

2. Ոչ ընթացիկ ակտիվների և ակտիվների հարաբերակցության գործակիցը՝ -1.44,

3. Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների հարաբերակցության գործակիցը՝ +1.36,

4. Սեփական կապիտալի և ընթացիկ ակտիվների հարաբերակցության գործակիցը՝ -2.42:

Բոլոր գործոններին ազդեցությունը ֆինանսական ռիսկի գործակցի վրա կազմել է՝

$$\Delta\Phi\Omega = (-1.03) - 1.44 + 1.36 - 2.42 = -3.53:$$

Ինչպես երևում է հաշվարկներից, հետազոտված կազմակերպությունում 2012-2013 թթ. ֆինանսական ռիսկի վրա առավել ազդեցություն են ունեցել ոչ ընթացիկ ակտիվների և ակտիվների հարաբերակցության գործակիցը և սեփական կապիտալի և ընթացիկ ակտիվների հարաբերակցության գործակիցը:

Այսպիսով, քննարկելով ֆինանսական կայունության գնահատման գործակիցները, հարկ է նշել, որ կապիտալի օպտիմալ կառուցվածքի վերաբերյալ միասնական հստակ չափանիշներ գոյություն չունեն, յուրաքանչյուր կազմակերպություն պետք է գտնի իր համար այդ խնդրի լավագույն լուծումը: Բացի այդ կապիտալի կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները տարբեր տեսանկյուններից են գնահատվում կազմակերպության և ինվեստորների կողմից: Բանկերի և այլ ներդրողների համար առավել հուսալի իրավիճակ է, եթե սեփական կապիտալի տեսակարար կշիռը ավելի մեծ է, ինչը նվազեցնում է ֆինանսական ռիսկը: Ֆինանսական ռիսկի առկայությունը պայմանավորում է կազմակերպության գործունեության արդյունավետությունը, այդ իսկ պատճառով կազմակերպության ղեկավարության կարևորագույն խնդիրներից մեկը ֆինանսական ռիսկի գնահատման, և դրա հիման վրա կառավարման միջոցառումների համապատասխան համալիրի որոշումն է որակական նոր վիճակի անցնելու պահին:

Հնարավոր ֆինանսական ռիսկերի ի հայտ գալուց հետո, որոնց հետ կազմակերպությունը կարող է առնչվել իր ֆինանսական գործունեության ընթացքում և վերջինիս գնահատման արդյունքում, ինչպես նաև դրանց հետ կապված հավանական կորուստների բացահայտման դեպքում, կազմակերպության առջև դրվում է տվյալ ռիսկերի բարելավման մոտեցումների և մեթոդների մշակման խնդիր: Որպես այդպիսին հանդես է գալիս ռիսկերի կառավարումը, որը կարելի է բնութագրել որպես մեթոդների, հնարքների և միջոցառումների համախումբ, որը թույլ է տալիս որոշակի աստիճանով կանխատեսել ռիսկային իրավիճակները և միջոցներ ձեռնարկել դրանց տեղի

ունենալու դեպքում սպառնացող բացասական հետևանքները չեզոքացնելու կամ նվազեցնելու համար:

Ռիսկերի բարելավման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է կառավարման ընտրված մոտեցումով⁹: Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս ռիսկերի կառավարման մոտեցումները ներկայացնել հետևյալ ընդհանրական խմբերով¹⁰.

- ռիսկից խուսափում,
- ռիսկի ընդունում,
- ռիսկի կառավարում:

Մոտեցումների առաջին խումբը տարածված է այն ձեռներեցների շրջանում, ովքեր չեն սիրում հաճախակի ռիսկի դիմել և իրենց խնդիրն են համարում նվազագույն ռիսկային որոշումների կայացման միջոցով պահպանել առկա վիճակը կամ դանդաղ տեմպերով առաջ շարժվել: Այս ռազմավարության դեպքում ձեռներեցները խուսափում են նոր գործընկերներից՝ գերադասելով արդեն իսկ գոյություն ունեցող կապերը: Սակայն սա չի կարելի համարել արդյունավետ ռազմավարություն միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքներով, քանի որ անկանխատեսելի փոփոխությունները կարող են հանգեցնել բացասական հետևանքների:

Երկրորդ մոտեցումը ռիսկի ընդունումն է: Այս ռազմավարությունը ենթադրում է, որ մտածված ընդունում են ռիսկի առկայությունը, ինչն ավելի բնորոշ է ձեռներեցին: Հաճախ կարելի է հանդիպել այնպիսի դեպքերի, երբ ռիսկային իրավիճակում հայտնվելը թվում է անխուսափելի, սակայն որոշ ձեռներեցների հաջողվում է գրոյական կորուստներով դուրս գալ իրավիճակից: Բայց հարկ է նշել, որ ռիսկի ընդունման այս տարբերակը նույնպես չի հանդիսանում խնդրի օպտիմալ լուծում այն հանգամանքների պատճառով, որ առավել հաճախ հավանական վերջնական արդյունքը չի կարող համընկնել նախագծվողի հետ:

Դա է պատճառը, որ ներկայումս ավելի լայն տարածում են ստացել ռիսկի կառավարման մոտեցումները¹¹, այսինքն՝ ռիսկի

⁹ Божко В. П., Балычев С.Ю., Батьковский А. М. и др. Управление финансовой устойчивостью предприятий // Экономика, статистика и информатика. Вестник УМО. 2013. №4. С. 36-41.

¹⁰ Панягина А.Е. Подходы к пониманию и классификации рисков // Современная экономика: проблемы, тенденции, перспективы. 2012. №6. С. 6-16.

¹¹ Шамин Д. В. Анализ методики финансовой устойчивости предприятия на основании определения уровня толерантности к рискам // Интеграл. 2013. № 1-2. С. 62-64.

որոշակիացում և գնահատում, ինչպես նաև միջոցառումների ձեռնարկում այն նվազեցնելու նպատակով: Եվ հենց դա է, որ համարվում է առաջնահերթ ռազմավարություններից մեկը, որը նպատակաուղղված է հաջողության հասնելու: Ռիսկի կառավարումը սուբյեկտից պահանջում է ոչ միայն ռիսկի աստիճանի որոշում, նրա գնահատում, վերլուծություն և այլն, այլ նաև հնարավոր կորուստներից խուսափելու միջոցառումների իրականացում¹²:

Ռիսկի կառավարման ընթացքում օգտագործվում են ռիսկերի նվազեցման հետևյալ առավել տարածված և հիմնական մեթոդները¹³.

- ռիսկերի դիվերսիֆիկացիա,
- ռիսկերի ապահովագրում,
- սահմանափակումների կամ լիմիտավորման մեթոդ:

Ռիսկերի դիվերսիֆիկացիան ռիսկի համատեղ ենթարկվածության նվազեցման միջոց է՝ տարբեր տեսակի ակտիվների միջև միջոցների բաշխման հաշվին, որոնց գինը իրար միջև անմիջականորեն կապված չեն: Այսպիսով, դիվերսիֆիկացումը թույլ է տալիս խուսափել ռիսկի մի մասից՝ գործունեության ամենատարբեր տեսակների միջև կապիտալի բաշխման ժամանակ:

Ռիսկերի ապահովագրումը ռիսկի նվազեցման ամենակարևոր և տարածված եղանակներից մեկն է: Նրա էությունն այն է, որ կազմակերպությունը ռիսկից խուսափելու համար պատրաստ է հրաժարվել իր եկամուտների մի մասից, այսինքն՝ պատրաստ է ապահովագրական ընկերությանը վճարել ռիսկի աստիճանի նվազեցման համար:

Ներկայումս ռիսկերի կառավարման բավականին տարածված մեթոդ է նաև սահմանափակումների կամ լիմիտավորման մեթոդը, որը հատկապես լայն կիրառություն ունի փոխատվական հարաբերություններում: Այն արդյունավետորեն կիրառվում է բանկային համակարգի կողմից, սակայն որոշակի կիրառություն ունի նաև առևտրային կազմակերպություններում՝ կապված առևտրային վարկի, ապրանքների ապառիկ ձեռքբերման, ստացված փոխառությունների հետ: Այն ծախսերի, վաճառքի, վարկերի և այլնի սահմանային չափի սահմանումն է:

Ընդհանրապես ցանկացած գործունեության արդյունավետության բարձրացման և կառավարման համար պետք է կատարել նաև

¹² Koschyk H., Wilson T. C. Principles for dealing with financial stability risks // Journal of risk management in financial institutions. 2013. №2. P. 129-136.

¹³ Ембулаев В.Н., Дегтярева О. Г. Системный подход как метод изучения рискованных ситуаций //Территория новых возможностей. Вестник Владивостокского государственного университета экономики и сервиса. 2013. № 1. С. 96-105.

ռիսկի վերահսկողություն: Ռիսկի վերահսկողությունը մշտապես տարվող գործընթաց է կազմակերպության գործունեության և ներքին վերահսկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Այն կարող է նպաստել կազմակերպությունների եկամուտների ավելացմանը և ծախսերի կրճատմանը, հնարավոր կորուստների կամ այդ կորուստների առաջացման աղբյուրների կանխատեսմանը, ռիսկերի նվազեցման տնտեսական խթանմանը, ռիսկերի կառավարման մեխանիզմների հստակությանը, ինչպես նաև կազմակերպության բոլոր ստորաբաժանումների և ծառայությունների կողմից ռիսկերի կորողինացված վերահսկմանը: Ելնելով վերոնշյալից պետք է ասել, որ ռիսկի կառավարման գործընթացը անբաժանելի է ֆինանսական վերահսկման գործընթացից: Ներքին վերահսկման համակարգի ստեղծումը մեր կարծիքով առավելագույնս կնպաստի ֆինանսական ռիսկի որոշակի տեսակի ճանաչման, ստույգ գնահատման և, որպես արդյունք, ռիսկի մակարդակի նվազեցման գործընթացին: Ներքին վերահսկման համակարգը պետք է ընդգրկի բազմազան արտաքին և ներքին տեղեկատվության հավաքման և մշակման համար անհրաժեշտ տարրերը և նպաստի որոշումների ընդունման գործընթացին կազմակերպության մենեջմենթի բոլոր մակարդակներում: Ներքին վերահսկողության համակարգի հիմնական խնդիրներից է կառավարման արդյունավետության հիմնական ցուցանիշների, հատկապես՝ սկզբնական փաստաթղթերի և առաջնային տեղեկատվության լրիվության և հավաստիության վերահսկումը: Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ ռիսկերի բարելավման վերջը քննարկված մոտեցումներն էլ ունեն ինչպես նշանակալի առավելություններ, այնպես էլ թերություններ: Եվ բացի այդ, տնտեսությունն անընդհատ զարգանում է, փոփոխվում են տնտեսվարման մեթոդներն ու հետևաբար, փոխվում է նաև կազմակերպության ռիսկային իրավիճակների առաջացման աղբյուրների կազմը, հաճախականությունն ու դրսևորումները: Այսինքն՝ ներկայիս տնտեսական զարգացման պայմաններում ռիսկերի կառավարման գործընթացից առավելագույն օգուտ կարելի է ստանալ միայն տարբեր մեթոդների համադրման շնորհիվ, որը նաև առաջարկում ենք իրականացնել մեր կողմից ուսումնասիրված «Նորդ-Իմպորտ» ՍՊԸ-ին, քանի որ արդեն իսկ կատարված վերլուծության արդյունքները փաստում են 2011-2013 թթ. ֆինանսական ռիսկի որոշակի չափով բարձր մակարդակի առկայությունը: Ուստի, միայն տարբեր մեթոդների համակցման հիման վրա կարելի է նվազագույն ծախսերով հասնել ցանկալի արդյունքի, այսինքն՝ ռիսկերի կառավարման գործընթացը կարող է ծառայել կազմակերպության մակարդակով տնտեսական արդյունավետության բարձրացման նպատակին:

АННОТАЦИЯ

Мане Матевосян, к.э.н

ФАКТОРНЫЙ АНАЛИЗ РИСКОВ ФИНАНСОВОЙ УСТОЙЧИВОСТИ И ПУТИ ИХ ПОВЫШЕНИЯ

Ключевые слова - Ответственность, управление рисками, инвестор, заемный капитал, организация, финансовая стабильность, факторный анализ

В соответствии с экономическими реформами, требуются новые решения для развития стратегий финансовой стабилизации производственных компаний. Учитывая этот факт, в этой статье в рамках организации осуществляется факторный анализ финансовых рисков, а так же рассматривается управление этими рисками. Исследования дали основание заключить, что подходы улучшение рисков, описанные в этой статье, имеют значительные преимущества и недостатки. И, кроме того, экономика постоянно развивается и меняются бизнес методы, поэтому изменяется структура источников риска, а так же их частота и проявления. Таким образом, только при сочетании различных методов можно достичь желаемых результатов с минимальными затратами то есть, процесс управления рисками может служить методом повышения уровня экономической эффективности организации

ANNOTATION

Mane Matevosya, PhD, Professor

FINANCIAL STABILITY WITH RELATED TO RISK FACTOR ANALYSIS AND WAYS OF IMPROVEMENT

Keywords - Obligation, risk management, investor, borrowed capital, organization, financial stability, Factor, analysis

In the line of economic reforms renewed solutions are required for the financial stability of the strategic process of production. Taking into consideration this fact, in the framework of this article, according to the carried out organization, were implemented financial risk analysis and were proposed risk management approaches.

Carried out researches give basis to conclude the risk improvement approaches discussed within this article have both significant advantages and shortcomings. Besides, the economy is constantly evolving business methods are changing also, thus changes the organization source of risk situation structure, frequency and manifestations.

Therefore, only a combination of different methods based on least cost to achieve the desired result, that is a risk management process can serve to enhance the economic efficiency of the organization.